Գ Ն Ա Հ Ա Տ Մ Ա Ն   Ե Վ   Թ Ե Ս Տ Ա Վ Ո Ր Մ Ա Ն   Կ Ե Ն Տ Ր Ո Ն

# ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2025

# ԳՐԱՖԻԿԱ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

*Հարգելի՛ ուսուցիչ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

***Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:***

**1** **Ի՞նչ հիմնական գործառույթ ունի Dictate գործիքը Microsoft Word ծրագրում:**

1) Տեքստի թարգմանում այլ լեզուներով
2) Տեքստի բարձրաձայն ընթերցում
3) Օգտագործողի խոսքի վերածում տեքստի
4) Ստեղնաշարային հրամաններով տեքստի խմբագրում

**2** **Ի՞նչ նպատակով է օգտագործվում Pivot Table-ը Microsoft Excel ծրագրում:**

1) Տվյալների տեսքն ու ձևաչափը փոխելու համար՝ ներառյալ գույներն ու բջիջների ոճերը
2) Տվյալների պատահական դասավորություն ստեղծելու համար
3) Մեծ աղյուսակներից տվյալների ամփոփման, վերլուծության և խմբավորման համար
4) Տվյալների ավտոմատ գեներացման և աղյուսակի տողերը թաքցնելու համար

**3** **Ի՞նչ նպատակով է փաստաթղթում տեղադրվում Watermark-ը:**

1) Փաստաթղթի բոլոր էջերի վրա կիրառում է թափանցիկ պաշտպանիչ ծածկույթ՝ տպագրության ժամանակ թանաքը խնայելու համար
2) Փաստաթղթի վերնագրի ֆոնն է փոխում՝ ավելացնելով դեկորատիվ տարրեր՝ վերնագիրը դարձնելով տեսանելի
3) Փաստաթղթին ավելացնում է ֆոնային պատկեր կամ տեքստ՝ նշելու գաղտնիությունը կամ հեղինակային պատկանելությունը
4) Փաստաթղթի լուսանցքներում ավտոմատ տեղադրում է հեղինակի ստորագրությունը՝ վավերականությունը հաստատելու համար

**4** **Adobe Photoshop ծրագրի ստանդարտ ֆիլտրերը (Filter) ո՞ր Bits per Channel (RGB) ռեժիմում են հասանելի միայն սահմանափակ ֆունկցիաներով:**

1) 24 Bits/Channel
2) 8 Bits/Channel
3) 16 Bits/Channel
4) 32 Bits/Channel

**5** **Adobe Photoshop ծրագրում նշվածներից ո՞ր ֆայլային ֆորմատը *չի* պահպանում ստեղծված նախագծի բոլոր խմբագրվող շերտերը (Layers), թափանցիկությունը և այլ հատկությունները:**

1) JPEG
2) PSD
3) PSB
4) TIFF

**6** **Adobe Photoshop ծրագրում նոր փաստաթուղթ բացելիս ո՞ր հրամանը Document Properties-ի (New Document) պարամետր *չէ*:**

1) Background Contents
2) Pixel Aspect Ratio
3) Color Profile
4) Text Alignment

**7** **Adobe Photoshop ծրագրում նշվածներից ո՞ր գործիքն է թույլ տալիս ընտրովի ավելացնել պատկերի որոշակի հատվածների գունային հագեցվածությունը (Saturation):**

1) Dodge Tool
2) Smudge Tool
3) Burn Tool
4) Sponge Tool

**8** **Adobe Photoshop ծրագրում նշվածներից ո՞ր գործիքն է թույլ տալիս ընտրության (Selection) եզրերը փափկացնել, հղկել՝ առանց շերտի բուն բովանդակությունը փոխելու:**

1) Quick Mask
2) Select and Mask
3) Edge Grow Selection
4) Transform Selection

| 9 |
|---|

**Adobe Photoshop ծրագրում ո՞ր գործիքն է թույլ տալիս ավտոմատ լրացնել ընտրված տարածքը՝ վերլուծելով շրջակա գույնը և կառուցվածքը:**

1) Content-Aware Fill
2) Paint Bucket Fill
3) Smart Fill Tool
4) Texture Fill Tool

| 10 |
|---|

**Adobe Illustrator ծրագրում ո՞ր գործիքն է օգտագործվում վեկտորային կորերը և կառչող կետերը (Anchor Points) խմբագրելու համար:**

1) Raster Curve Tool
2) Pixel Smudge Tool
3) Mash Warp Tool
4) Direct Selection Tool

| 11 |
|---|

**Adobe Illustrator ծրագրում ի՞նչ գործողություն է կատարում Embed հրամանը :**

1) Վերափոխում է ֆայլը վեկտորային ուղիների, առանց տվյալների կորստի
2) Պատկերը վերածում է Smart Object-ի, որպեսզի պահպանի առանձին շերտ
3) Կպցնում է ֆայլը փաստացի ֆայլի մեջ, դառնում է անկախ արտաքին աղբյուրից
4) Փոփոխում է պատկերի չափսերը՝ առանց որակի կորստի, պահպանելով պիքսելները

| 12 |
|---|

**Ո՞րն է Blend Tool գործիքի հիմնական կիրառությունը Adobe Illustrator ծրագրում:**

1) Ստեղծում է միջանկյալ պատկերներ երկու կամ ավելի օբյեկտների միջև՝ ապահովելով գույնի և ձևի սահուն անցում
2) Ստեղծում է ցանցային կառուցվածք (Mesh), որի կետերը թույլ են տալիս լրկալ փոփոխել օբյեկտի գույնը
3) Փոխում է օբյեկտի խառնման ռեժիմը՝ ստորին շերտերի հետ գունային համադրություն ստանալու համար
4) Միավորում է ընտրված բոլոր օբյեկտները մեկ ամբողջական եզրագծի մեջ՝ ջնջելով հատվող մասերը

**13** **Ի՞նչ է անում Opacity Mask-ը Adobe Illustrator ծրագրում:**

1) Ստեղծում է շերտ, որը վերահսկում է օբյեկտի թափանցիկությունը
2) Ստեղծում է շերտ, որը փոխում է օբյեկտի գույնը ըստ CMYK-ի
3) Ավելացնում է շերտ, որը փոխում է էֆեկտը միայն մեկ ուղու վրա
4) Ավելացնում է շերտ, որը վերահսկում է օբյեկտի վրա դիմակի Clipping Path-ը

**14** **Adobe Illustrator ծրագրում ի՞նչ գործողություն է կատարում Touch Type Tool-ը:**

1) Փոխակերպում է տեքստը վեկտորային գծերի՝ հնարավորություն տալով ձևափոխել
2) Ավտոմատ փոխում է ամբողջ տեքստի տառերի միջակայքը՝ դասավորելով կորի երկայնքով
3) Թույլ է տալիս կիրառել հեռանկարային ձևափոխում ամբողջական տեքստային բլոկի վրա
4) Թույլ է տալիս յուրաքանչյուր տառ առանձին ձևափոխել, պտտել կամ տեղաշարժել

**15** **Ո՞րն է Shaper Tool գործիքի հիմնական գործառույթը Adobe Illustrator ծրագրում:**

1) Հարթեցնում է վեկտորային կորերը՝ ավտոմատ նվազեցնելով կառչող կետերի քանակը
2) Թույլ է տալիս տեղաշարժել և պտտել վեկտորային օբյեկտները՝ օգտագործելով կառչող կետերը
3) Միավորում է իրար մոտ գտնվող օբյեկտները՝ավտոմատ ստեղծելով մեկ ընդհանուր վեկտորային օբյեկտ
4) Մոտավոր նկարած ձևերը ավտոմատ ճանաչում և վերածում է ճշգրիտ վեկտորային պատկերի

16 **Ի՞նչ տարբերություն կա Group և Combine հրամանների միջև CorelDRAW ծրագրում:**

1) Group-ը վերացնում է օբյեկտների գույները, իսկ Combine-ը պահում է միայն ուրվագիծը՝ գծի հաստությամբ
2) Group-ը օբյեկտները միավորում է ռաստերային պատկերի մեջ, իսկ Combine-ը՝ վեկտորային միաձուլման համար
3) Combine-ը դասավորում է օբյեկտները կողք կողքի, իսկ Group-ը ինտեգրում է դրանք միմյանց հետ
4) Group-ը միավորում է օբյեկտները առանց ձևերը փոխելու, իսկ Combine-ը դրանք միաձուլում է մեկ վեկտորային օբյեկտի

17 **CorelDRAW ծրագրում ո՞ր հրամանն է կիրառվում տեքստը վերջնական վեկտորային կորերի (Curves) փոխարկելու համար:**

1) Arrange > Rasterize Weld
2) Arrange > Convert to Object
3) Object > Convert to Curves
4) Object > Rasterize Text

18 **Աքսոնոմետրիկ պրոյեկցիայի ո՞ր տեսակի դեպքում են առանցքներից երկուսի մասշտաբային գործակիցները հավասար, իսկ երրորդինը՝ տարբեր դրանցից:**

1) Դիմետրիկ պրոյեկցիա
2) Իզոմետրիկ պրոյեկցիա
3) Տրիմետրիկ պրոյեկցիա
4) Կովալյեր պրոյեկցիա

19 **Ի՞նչ է նշանակում Rendering-ը 3D մոդելավորման մեջ:**

1) Մոդելի պոլիգոնների թվի օպտիմալացումը՝ տեսարանի արտադրողականությունը բարձրացնելու համար
2) 3D տեսարանի Shading Network-ների Real-Time հաշվարկն ու Compile-ը՝ Viewport-ի աշխատանքը արագացնելու համար
3) Տեսարանում լույսերի և տեսախցիկի տեղադրման նախնական աշխատանքը՝ մինչև վերջնական արդյունքի գեներացումը
4) 3D տեսարանից վերջնական 2D պատկեր ստանալը՝ լուսավորության, ստվերի, նյութերի և էֆեկտների հաշվարկով

**20** **Ի՞նչ է Rigging-ը 3D մոդելավորման մեջ:**

1) Տեսարանի լուսավորման կարգավորումների և վերարտադրման նախնական կազմավորումը
2) Մոդելին կմախք (ոսկրեր) և կառավարման համակարգ ավելացնելը՝ այն անիմացիայի համար շարժուն դարձնելու նպատակով
3) Գագաթների և եզրերի ավտոմատ կապակցումը՝ ձևափոխության համար
4) Մոդելի նյութերի աստիճանակարգային կապակցումը

**21** **Տրված ո՞ր 3 ֆայլային ֆորմատներն են պահպանում թափանցիկությունը (Transparency) Adobe Photoshop ծրագրում: (3 միավոր)**

1. RAW
2. JPEG
3. PNG
4. GIF
5. BMP
6. PSD
7. PGM
8. PPM
9. DNG

**22** **Adobe Photoshop ծրագրում նշվածներից ո՞ր 3 գործողություններն են թույլ տալիս մի քանի շերտեր միաժամանակ կապակցել, խմբավորել կամ կառավարել՝ առանց դրանք ձուլելու: (3 միավոր)**

1. Layer via Copy
2. Convert to Smart Object
3. Link Layers
4. Group Layers
5. Merge Layers
6. Merge Visible
7. Flatten Image
8. Convert to Dynamic Object
9. Clip Join Layers

**23** Նշվածներից ո՞ր 3 գործողություններն են Adobe Illustrator ծրագրի Pathfinder գործիքների շարքում: (3 միավոր)

1. Join Tool
2. Exclude
3. Create
4. Merge Layers
5. Rasterize
6. Flatten Transparency
7. Gradient Mesh
8. Divide
9. Intersect

**24** Նշվածներից ո՞ր 3-ում են ճիշտ տրված Adobe Illustrator ծրագրի գործիքների և հրամանների նկարագրությունները: (3 միավոր)

1. Shape Builder Tool-ը թույլ է տալիս միավորել օբյեկտները:
2. Line Segment Tool ստեղծում է ուղիղ վեկտորային գծեր:
3. Perspective Selection Tool-ը թույլ է տալիս օբյեկտները տեղաշարժել հեռանկարային (Perspective) ցանցի վրա:
4. Artboard Tool-ը փոխարկում է վեկտորային օբյեկտները Bitmap-ի:
5. Brush Tool-ը ավտոմատ ստեղծում է Gradient Mesh:
6. Live Paint Bucket-ը ավտոմատ ստեղծում է Clipping Mask:
7. Width Tool-ը ստեղծում է երկրաչափական պատկերներ:
8. Recolor Artwork-ը դնում է Overlay Gradient բոլոր օբյեկտների վրա:
9. Smooth Tool-ը ավտոմատ կտրում և բաժանում է գիծը մասերի:

**25** **Նշվածներից ո՞ր 3 պնդումներն են ճիշտ գունային համադրությունների վերաբերյալ: (3 միավոր)**

1. Complementary գույները գունային շրջանակի վրա գտնվում են 90° անկյան տակ:
2. Analogous գույները գունային շրջանակում գտնվում են միմյանց կողքի:
3. Monochromatic համադրությունը պարունակում է միմյանց հակադիր գույներ:
4. Tetradic համադրությունը կազմված է ընդամենը երեք գույնից:
5. Split-Complementary գույները կազմվում են մեկ գույնի և նրա հակադիրի երկու հարևան գույներից:
6. Tonal գույները կազմված են միայն ամենավառ և հագեցած երանգներից:
7. Square սխեման միավորում է իրար կողք գտնվող չորս գույները:
8. Triadic գույները հավասարաչափ տեղադրված են գունային շրջանակում:
9. Achromatic համադրությունը ներառում է գունային շրջանակի բոլոր տաք գույները:

**26** **Տրված պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. CorelDRAW ծրագրի ֆայլը ավտոմատ պահպանվում է PSD ձևաչափով:
2. Adobe Photoshop ծրագրում Healing Brush Tool-ը օգտագործվում է օբյեկտները վեկտորային ձևերի վերածելու համար:
3. CorelDRAW ծրագրում PowerClip հրամանը թույլ է տալիս մեկ օբյեկտ տեղադրել մյուսի ներսում՝ պահպանելով արտաքին օբյեկտի ձևը և սահմանները:
4. Adobe Illustrator ծրագրի Artboard Tool-ը օգտագործվում է տեքստային բլոկներին ավտոմատ անիմացիա ավելացնելու համար:
5. Adobe Photoshop ծրագրի հիմնական աշխատանքային միջավայրը վեկտորային կորերն են, իսկ պիքսելներն օգտագործվում են միայն էֆեկտների համար:
6. Adobe Illustrator ծրագրում Pen Tool-ը թույլ է տալիս ստեղծել մասշտաբից անկախ (Resolution Independent) վեկտորային գծեր և ուղիներ:
7. CorelDRAW ծրագրի Pick Tool-ը նախատեսված է գունային պալիտրայից գույն ընտրելու համար:
8. Adobe Photoshop ծրագրում Alpha Channel-ը թույլ է տալիս վերահսկել օբյեկտի թափանցիկությունը:
9. Adobe Illustrator ծրագրի Live Paint Bucket Tool-ը ցանկացած օբյեկտ ավտոմատ վերածում է 3D մոդելի:

27 **HTML/ CSS-ի վերաբերյալ տրված պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. HTML-ի **<pvid>** թեգը օգտագործվում է վիդեո ներմուծելու համար:
2. HTML-ի **<a>** թեգը օգտագործվում է հիպերհղումներ ստեղծելու համար:
3. CSS-ի **color** հատկությունը փոխում է էջի ֆոնը:
4. **<img>** թեգը թույլ է տալիս ավելացնել պատկեր:
5. CSS-ի **padding** հատկությունը ավելացնում է օբյեկտին ստվեր :
6. CSS-ի **margin** հատկությունը վերահսկում է օբյեկտի շրջապատի արտաքին տարածությունը:
7. HTML-ի **<div>** թեգը օգտագործվում է պարբերություններ ստեղծելու համար:
8. CSS-ի **display: inline;** հատկությունը ստիպում է օբյեկտին սկսվել նոր տողից:
9. CSS-ի **Float** հատկությունը ապահովում է, որ օբյեկտը սկսվի նոր տողից և զբաղեցնի ամբողջ լայնությունը:

28 **Նշվածներից ո՞ր 3 գործողություններն են ճիշտ HTML/CSS-ի հիմնական հատկությունների և թեգերի վերաբերյալ: Նշեք դրանց համարները: (3 միավոր)**

1. CSS-ի **display:inline;** հատկությունը դարձնում է տարրը անտեսանելի էջում:
2. HTML-ի **<ul>** թեգը օգտագործվում է ցուցակներ ստեղծելու համար:
3. CSS-ի **font-weight** հատկությունը վերահսկում է տեքստի չափը:
4. HTML-ի **<table>** թեգը թույլ է տալիս ստեղծել աղյուսակներ:
5. CSS-ի **border** հատկությունը փոխում է էջի գույնը:
6. CSS-ի **background-color** հատկությունը փոխում է օբյեկտի ֆոնը:
7. HTML-ի **<form>** թեգը օգտագործվում է էջում տեքստային ֆայլ ներմուծելու համար:
8. CSS-ի **text-center;** հատկությունը բերում է օբյեկտը մեջտեղ:
9. HTML-ի **<h1>** թեգը ստեղծում է հիպերհղումներ:

29 **Նշվածներից ո՞ր 3-ն են ճիշտ CSS-ի վերաբերյալ: (3 միավոր)**

1. **width** հատկությունը փոխում է տողի գույնը:
2. **font-size** հատկությունը փոխում է տեքստի չափը:
3. **background-color**-ը փոխում է տարրի եզրագիծը:
4. **font-weight:bold;** հատկությունը դարձնում է տեքստը թավ:
5. **float** հատկությունը վերահսկում է եզրագծի հաստությունը:
6. **padding** հատկությունը վերահսկում է օբյեկտի բովանդակության և դրա սահմանի միջև տարածությունը:
7. **border** հատկությունը փոխում է էջի ֆոնը:
8. **text-paragraph-align-center;** կենտրոնացնում է տեքստը տողի մեջտեղ:
9. **display: inline;** ստիպում է տարրին զբաղեցնել ամբողջ լայնությունը:

30 **Նշվածներից ո՞ր 3 գործողություններն են ճիշտ: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Sans-serif տառատեսակները չեն օգտագործվում թվային միջավայրում:
2. Adobe Photoshop ծրագրում Layer Mask-ը թույլ է տալիս ոչ կործանարար խմբագրում՝ թաքցնելով շերտի հատվածները՝ առանց դրանք իրականում ջնջելու:
3. CMY մոդելը հանդիսանում է Additive գունային մոդել, որը բնութագրում է էկրանի լույսի ավելացումը:
4. Sans-serif տառատեսակները միշտ գլխատառերով են և չեն կարող ներառել փոքր տառեր:
5. Կոնստրուկտիվ գծագրության մեջ Իզոմետրիկ (Isometric) պրոյեկցիայի երեք հիմնական առանցքներն գտնվում են միմյանց նկատմամբ 120° անկյան տակ:
6. HTML-ում <div> տարրը նախատեսված է միայն տեքստային պարբերություններ ստեղծելու համար:
7. HSB/HSV մոդելում Saturation-ը վերահսկում է, թե որքան սև է ավելացվել գույնին՝ դարձնելով այն մուգ:
8. Secondary գույները առաջանում են Primary գույների խառնմամբ:
9. Adobe Illustrator ծրագրում Dash Offset-ը փոխում է գծի գույնը: